

Էլիզա Շուա Դյուսապեն

ԽԱՂԱՍՐԱՅ.
Պաշինկո

Վեպ

Թարգմանիչ՝

Կարինե Աղաբեկյան



Գ Ի Տ Ա Ն Ք
Երևան 2021

With the support of the Swiss Arts Council Pro Helvetia

Elisa Chua Dusapin Les billes du Pachinko

Դյուսապեն, Էլիզա Շուա

ԽԱՂԱՍՐԱՅ. Պաչինկո – Վեպ, Եր.: Գիտանք, 2021, 72 էջ

Ո՞վ է նա, ուն հայրը շվեյցարացի է, իսկ մայրը կորեուհի: Ով ստիպված է խոսել ճապոներեն իր կորեացի պապի ու տատի հետ, որոնք երիտասարդ տարիքում գաղթել են Կորեայից՝ ստեղծելով հարյուր հազարավոր կորեացիների սփյուռքը ճապոնիայում: Մեր օրերին, երբ աշխարհի բնակչության զգալի մասը տարբեր ազգերի սփյուռք է, վեպի հերոսուհին փնտրում է իր ակունքների երկիրը, ազգային ինքնությունն ու մայրենի լեզուն: Այս վեպի անվանումը կարող էր լինել «Ուղևորություն նախնիների երկիր»:

Վեպն արժանացել է 2019 Շվեյցարիայի գրական մրցանակին:

ISBN 978-9939-810-53-9

Original title: © Editions Zoé, 2018

Published by arrangement with Agence littéraire Astier-Pécher

ALL RIGHTS RESERVED

© «Գիտանք», թարգմանության և ձևավորման համար, 2021

Պաշինկոն խմբային և մեկուսի խաղ է: Խաղասարքերը դասավորված են երկար շարքերով. սարքի առաջ յուրաքանչյուրը խաղում է իր համար՝ առանց նայելու հարևանին, որը կիպ նստած է կողքին:

Ռուլան Բարթ, *Նշանների կայսրություն*

Ես դուրս եմ գալիս գնացքից և խցկվում եմ Շինագավա կայարանի նեղ անցումը: Պսպղացող ատամներով կինը ատամի մածուկ է գովագդում պատերին կախված լուսապաստառներին: Շտապող մարդկանց հոսանք: Դրսում բանվորները քանդում են շինհրապարակի մնացորդները: Կառամատույցը կարկառված է բալենու պուրակին. դրա առանձնացված մասում, կտրուկ շարժումներ անելով, ծխում են գրասենյակների աշխատողները: Նրանք հանգցնում են ծխուկները քարերին, որոնք հիշեցնում են ձիերին տրվող քարաղը:

Չետևում եմ տիկին Օգավայի հրահանգներին ու անցնում հետիոտնի կամրջակով, որը տանում է բնակելի համալիրի 4488 շենքը. ներքնախոտով տեղեկացնում եմ, որ ելել եմ, և վերելակով բարձրանում եմ վերջին հարկը:

Դուռը բացվում է բնակարանի ներսը: Թեև շոգ է, տիկին Օգավայի հագին կանացի բաճկոն է, ոտքերը գրկող տաբատ ու կոշիկներ: Նա ավելի երիտասարդ է, քան կարծում էի: Նիհարությունը հավանաբար ծերացնում է նրան: Նա ուղարկել է դստերը՝ Միեկոյին՝ գնումներ անելու մթերային խանութում: Ուզում է ինձ ցույց տալ տարածքը մինչև նրա վերադարձը:

Երկար միջանցքը միացնում է համաչափ դասավորված սենյակների շարքը: Սկսում ենք լողասենյակից: Այն շատ նեղ է և պատված է մարմնագույն ճկազանգվածով: Կանգնելու գրեթե տեղ չկա: Դիմացը նույնքան նեղ, ներկառուցված զգեստապահարանով ու շագանակագույն կարպետով ննջարանն է: Մահճակալին երկու ծածկոց է զգված. մեկը լավ արդուկված է, մյուսին, որ ճնրթված է, խառնիխուռն թափված են շրջազգեստներ ու կարճաթև շապիկներ: Օդում ծխախոտի թեթև հոտ է զգացվում:

- Ժամանակին շենքը հյուրանոց էր. ծխողների հարկն է, - ներողություն է խնդրում տիկին Օգավան: - Մենք կարողացանք տեղափոխվել այստեղ, երբ տեղը սնանկացավ: Ամուսինս ճեպընթաց գնացքների ճարտարագետ է: Մասնակցել է Շինագավա կայարանի ընդլայնման աշխատանքին՝ Շինկանսենն ընդունելու համար: Թաղամասը զարգանում է: Այս շենքը կրկին հյուրանոց կդառնա. աշխատանքը նախատեսված է սկսել ամսվա վերջին: Այս պահին այստեղ բնակվում ենք միայն մենք:

Նա ինձ է նայում դռնատեղից՝ ձեռքը դրած բռնակին: Ես թեթևակի պտտվում եմ տեղում, նեղվում եմ այս տարածքում, որը նա ինձ առաջարկում է զննել անլուսամփոփ լամպի լույսով: Լուսամուտը բացակայում է:

Միջանցքի վերջում ամերիկյան ձևով համատեղված խոհանոց-հյուրասենյակն է: Գագոջախն ու գրադարանը զբաղեցնում են գրեթե ողջ տարածքը: Ապակեպատ լուսամուտախորշից այն կողմ աղտոտված օդի շերտը պղտորում է ներքևում փռված հսկա քաղաքի պատկերը:

Տիկին Օգավան ինձ նորից տանում է մուտքի մոտ:

- Միեկոյի սենյակը ներքևում է, - ասում է՝ բացելով կախարանով կիսով չափ քողարկված մի դուռ, որը բացվում է բետոնե աստիճաններից: - Ձգույշ եղեք, լույսը վառելու համար պետք է իջնել:

Նրա ծայրը փոքր-ինչ բարձր է հնչում, ասես քարանձավում ենք: Խարխափելով հետևում են նրան, մինչև որ զգում են առածգական հատակը: Այստեղ ավելի խոնավ է: Նեոնե լամպերը ճարձատում են, հետո բացահայտում են ապակյա բազրիքով շրջապատված մի հարթակ: Ներքևում փոս է: Փոքր-ինչ թեք հատակն ավարտվում է ջրթողով. անկյունում միտեղանի մահճակալ է դրված:

Տիկին Օգավան դնում է ձեռքերը բազրիքին:

- Լողավազանն է: Նույնիսկ հյուրանոցի օրոք չէր գործում: Բորբոսնած էր: Դատարկելուց հետո դարձավ անվտանգ տարածք: Միեկոն ժամանակավորապես քնում է այստեղ:

Կռանում են, որ լավ տեսնեն: Մահճակալի կողքին գրասեղան կա, զգրոց, յոգայի գորգ ու մարզողակ, որոնք բազմապատկվում են երկու պատի հայելիներից: Սանդուղքաբաժինը երկարացված է ճկազանգվածե խորանարդներից: Մտքունս պատկերվում է *Տեսողի* խաղը, որտեղ երկրաչափական պատկերները պետք է տեղավորվեն առանց ազատ տարածություն թողնելու:

- Ձեզ դո՞ւր է գալիս յոգան, - հարցնում է տիկին Օգավան:

Պատասխանում են, որ չգիտեն, երբեք չեն զբաղվել դրանով: Նա դանդաղ գլխով է անում:

Մենք բարձրանում ենք: Խոհանոցում մեզ մի աղջնակ է սպասում: *Կառե* կտրված մազերով, դեղին կարճ տաբատով ու կարճաթև շապկով: Նա քրտնած է. երբ խոնարհվում է՝ ինձ ողջունելու, մազափունջը կպած է մնում ճակատին:

- Սաղմոնով է, - ասում է մորը՝ ցույց տալով պատրաստի լազանյայով տուփը:

Դեռ առավոտվա ժամը տասն է, բայց Միեկոն սեղան է զցում, մինչ մայրը բաց է անում ոստրեները, տաքացնում է լազանյան մանրալիք վառարանում, զոլորչապատ հանում է և Միեկոյին ու ինձ մեծ բաժիններ է մատուցում, իսկ իրեն՝ փոքր:

Նա հանել է բաճկոնը: Կարճաթև շապիկը կիպ գրկում է կողերն ու երկու ցցուն պտուկները: Ուսից մինչև դաստակը դուրս է տվել մի երակ: Կարծում են՝ նրա ամեն ինչը չոր է: Բացի լազանյայի շերտերից, որոնք սահում են նրա ձողիկներից, իսկ նա որսում է դրանք՝ փորփրելով վարդագույն բեշամելը: Ատամիս տակ երբեմն զգում են ավելի կոշտ կտոր, որը հավանաբար սաղմոն է: Միեկոն արդեն ավարտել է: Աթոռի թիկնակին հետ ընկած՝ նա ձկան պես բացուխուփ է անում բերանը:

Տիկին Օգավան սրբում է շոթունքները, ծալում իր անձեռոցիկը.

- Եթե նրան կարողանայիք ժամանակ առ ժամանակ նաև դուրս տանել...

- Իհարկե:

- Մտածում էի... Կկարողանա՞ք գնալ խաղալու:

- Այո:

Իրականում վստահ չեն, թե հասկացա ճապոներենում «խաղալ» եզրույթի իմաստը: Կորեերենում այն վերաբերում է և՛ ծառայողների համատեղ ժամանցին, և՛ մանկական խաղին: Ես գրեթե երեսուն տարեկան եմ, սովոր չեմ զբաղեցնել երեխաներին, պատկերացում չունեմ, թե այդ տարիքում ինչն է նրանց հետաքրքրում, և սկսում եմ զղջալ, որ արծազանքեցի հայտարարությամբ: Տեսել էի Տոկիոյի Սոֆիա համալսարանի բանասիրության բաժնի կայքում, երբ դեռ ժնկում էի: «Տոկիոյում փնտրում եմ ֆրանսերեն մայրենի լեզվի կրկնուսույց՝ տասը տարեկան երեխայի համար, ամռան արձակուրդի ընթացքում»: Ես մտադիր էի անցկացնել օգոստոսը հենց այնտեղ, իմ տատի-պապի տանը, և սեպտեմբերի սկզբին նրանց հետ ճամփորդել Կորեա, և վախենում էի պարապ մնալ Տոկիոյում: Տիկին Օգավան ֆրանսերենի ուսուցչուհի է, բայց ինքը պետք է զբաղվի ուսումնական տարվա նախապատրաստությամբ և չի ուզում, որ դուստրը երկար ժամանակ մենակ մնա: Պայմանավորվել էինք, որ այստեղ գտնվելու ընթացքում ես մի քանի անգամ կզբաղվեմ Միեկոյով:

Տիկին Օգավան սրբում է իր ափսեն՝ միաժամանակ նայելով իմ ափսեին:

- Չեզ դուր չի՞ գալիս: Ուտրե վերցրեք:

- Իհարկե դուր է գալիս, - ասում եմ՝ մի մեծ կտոր խփշտելով:

Նա տանում է լազանյան, և Միեկոն դնում է իմ առաջ ուտրեները: Կակղամորթը կծկվում է. մածուցիկ փոքր զանգված է: Շունչս պահում եմ ու ներծծում:

Բավարարված՝ տիկին Օգավան հարցնում է, թե որտեղ եմ բնակվում:

- Այստեղից ոչ հեռու, Յամանոտե գծով տասը կայարան դեպի հյուսիս, իմ տատի-պապի տանը, - ասում եմ ու նեղված՝ լռում: Նրանց մասին ճապոներեն խոսելիս թվում է, թե նրանք ինձ օտար են: Չգացումը վերացնելու հա-